Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ ԹԻՎ 50-Ա, 51-Ա ԵՎ ԱՊՐԻԼԻ 27-Ի ԹԻՎ 54-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 50-Ա որոշման նախաբանում և 54-Ա որոշման նախաբանում և բովանդակության մեջ առկա են կրճատ գրառված բառեր:

Որոշման հղումը ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի թիվ 757-Ն որոշման դրույթներին սխալ է, քանի որ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշման 5-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» թիվ 757-Ն որոշումը:

Թիվ 51-Ա որոշման հղումը ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի «գ» ենթակետին սխալ է, քանի որ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1519-Ն որոշմամբ 21-րդ կետը ուժը կորցրած է ճանաչվել:

Թիվ 54-Ա որոշման դրույթները սխալ են համարակալված: Որոշման 6-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
20.05.2021թ.